

## «ԳԱԼԱ»-ից բացի. «Հրազդանի» 20 տարվա փորձը բավարար պայման չէր

Դեկտեմբեր 24, 2010

«ԳԱԼԱ»-ից բացի. «Հրազդանի» 20 տարվա փորձը բավարար պայման չէր

Կարինե Սիմոնյան

«ՋեյՆուզ»



[Hrazdan.jpg](#) [1]

Դեկտեմբերի 23-ին մարզային հեռուստաընկերությունների հաճախականությունը ստանալու մրցույթում բացի Շիրակի «ԳԱԼԱ»-ից, միավորներով մյուս ամենացածրը Կոտայքի «Հրազդան» հեռուստաընկերությունն էր:

Նույն հաճախականության համար այն մրցում էր «Աբովյան-TV»-ի հետ: Հետևաբար վերջինին տրվեց Կոտայքում թվային հեռարձակման իրավունքը:

Պարտված [«Հրազդան»](#) [2] հեռուստաընկերության սեփականատեր Մնացական Հարությունյանը համոզված չէ, թե հանձնաժողովը բոլոր չափանիշները ճիշտ է գնահատել ու մրցույթում ամեն ինչ արդարացի է եղել:

«Չեն մեկնաբանում՝ ինչու չստացանք, ընդամենը միաձայն թվանշան են դնում: Նրանց տվեցին առավելագույն, մեզ տվեցին միջին գնահատականներ: Մարդ Աստծո, եթե այդպես են գտել, թող այդպես էլ վարվեն, մենք բոլոր դեպքերում շարունակելու ենք մեր գործունեությունը, գլխավոր գնահատականը մեր հեռուստադիտողն է, որին 20 տարի անբասիր ծառայել ենք», - ասաց Մնացական Հարությունյանը:

«Հրազդան»-ը Երևանից դուրս հիմնադրված առաջին տեղական հեռուստաընկերությունն է Հայաստանում: Սեփականատերը վստահեցնում է, որ անցած 20 տարիներին լուրջ ձեռքբերումներ են ունեցել: Տեխնիկապես բավականաչափ զինված են և իրենց մրցութային հայտով 600 հազար դոլարի ներդրման փաստաթղթեր էին ներկայացրել:

Եղել են կազմակերպություններ թե՛ Հայաստանից և թե՛ արտերկրից, որոնք ցանկություն են հայտնել ֆինանսապես աջակցել հեռուստաընկերությանը: Որպես օրինակ հեռուստաընկերության տնօրենը նշեց, որ Հայաստանից ֆինանսավորման պարտավորություն էր ստանձնել Ծաղկաձորի գրողների տան տնօրենը:

«Մենք շատ լավ ծրագիր և շատ լավ ներդրողներ ունեինք: Թե ինչու պարտվեցինք դա թողնում են ձեզ, դուք մեկնաբանեք», - ասաց «Հրազդանի» սեփականատերը:

«Աբովյան-TV» հեռուստաընկերությունը գործում է 1997 թվականից: Հաղորդումները հեռարձակվում են Աբովյան քաղաքում և շրջակա գյուղերում: Ընկերության գլխավոր տնօրեն Ազնիվ Չիգմեչյանը JNews-ին ասաց, որ իրենք բիզնես ծրագիրը գրելիս հաշվի են առել ՀՌԱՀ-ի կողմից առաջադրված բոլոր վեց պայմանները, այդ թվում և՛ սեփական արտադրության տոկոսը, և՛ աշխատակազմը, և՛ տեխնիկական միջոցները: Ունեն 20 աշխատող:

2011 թվականի առաջին 6 ամիսներին, մրցութային պայմանների համաձայն, պետք է անալոգային սփռում ապահովեն ամբողջ մարզում:

«Մենք գնելու ենք հաղորդիչներ, որոնք նախատեսված են և՛ անալոգային, և՛ թվային սփռման համար: Հետևաբար 2015 թվականից այդ նույն հաղորդիչները կօգտագործենք նաև թվային հեռարձակման համար, որպեսզի մեր ծախսերը կրկնակի չդառնան», - ասաց «Աբովյան-TV» գլխավոր տնօրենը:

Հեռուստաընկերության հիմնական բաժնեմասի սեփականատերն Արտաշես Մեիրաբյանն է, ով, ըստ Չիզմեչյանի, մասնագիտությամբ ռեժիսոր է և ներկա պահին հանրապետությունում չէ:

«Մենք ոչ միայն Աբովյանի, այլ նաև մոտակա մյուս քաղաքների՝ Բյուրեղավանի, Նոր Հաճնի քաղաքապետարանների հետ պայմանագիր ունենք և հարկ եղած դեպքում մեր հեռուստաընկերությունը լուսաբանում է նրանց աշխատանքն ու եթեր արձակում համապատասխան վճարի դիմաց»:

Ըստ գլխավոր տնօրենի, դա չի նշանակում, թե հեռուստաընկերությունը Աբովյանի քաղաքապետարանի հովանու ներքո է, ինչի մասին խոսակցություններ են տարածված:

Մրցույթում պարտված «Հրազդան» հեռուստաընկերության սեփականատեր Մնացական Հարությունյանն ասում է, որ դեռ կժանոթանա հանձնաժողովի եզրակացությանը, որի համաձայն իրենք չեն հաղթել մրցույթում: Կժանոթանա նաև մրցակցի հայտին: «Հետո կորոշեմ՝ արդյոք հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իմաստ ունի<sup>՞</sup>, թե<sup>՞</sup> ոչ», - ասաց Մնացական Հարությունյանը:

## Թեմատիկ նյութեր

[Amnesty International. Հայաստանի իշխանությունները պետք է հետաքննեն մարդու իրավունքների խախտման դեպքերը](#) [3]

[«Ինտերնետի հայկական տիրույթում բովանդակության գարգացման մասին» ռևուևնաստիություն](#) [4]

[Ինչպես լուսաբանել ընտրական և հետընտրական գործընթացները](#) [5]

[«Նա/Նե»-ի հանրային թղթակցի առաջին տեղի մրցանակը տրվեց LՀԱ-ի թղթակցին](#) [6]

[Obama World Blog. Վեց խորհուրդ հաջողված բլոգ ունենալու համար](#) [7]

**Source URL:** <http://www.jnews.am/node/633>

### Links:

[1] <http://www.jnews.am/files/Hrazdan.jpg>

[2] <http://www.hrazdantv.am/>

[3] <http://www.jnews.am/amnesty-international-statement-elections-2013>

[4] <http://www.jnews.am/report-on-content-of-armenian-internet-segment>

[5] <http://www.jnews.am/covering-elections>

[6] <http://www.jnews.am/anushik-avetyan-got-nane-media-award>

[7] <http://www.jnews.am/successful-blogger>